



Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

ԷԶԵՐ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայաստանում ժ—ժե դարերում, մի կողմից աշխարհիկ ու հոգուր երաժշտական արվեստների և, մյուս կողմից, գիտության ու փիլիսոփայության բուռն ծաղկման պայմաններում, աննախազեազ զարգացում է ապրում նաև, մասնակորապես, երաժշտա-գեղագիտական միտքը, որն և մինչև այժմ դեռևս ուսումնասիրված չէ:

Խնչպես ցուց են տալիս գիտողությունները, ժ—ժե դարերի հայ գիտնականները նախ ժառանգաբար յուրացնում են մեր վաղմիջնադարյան մտածողների՝ Դավիթ Անհաղթի, Դավիթ Քերականի, Ստեփանոս Սյունեցու և այլոց երաժշտա-գեղագիտական գաղափարները¹: Ապա, վերահարուցելով վերջիններիս կողմից շոշափված սկզբունքային հարցերը մի ժամանակ, երբ Հայաստանում, զարգացած ավատականության շրջանին հատուկ սոցիալ-տնտեսական հիմքի վրա, ծագել էր մտավոր նոր ու առաջադիմական մեկ շարժում, որի հատկանիշներն էին՝ հակում դեպի աշխարհիկ մտածողությունը, քննադատական վերաբերմունք դեպի եկեղեցական դոգմաները և գիտական բարձո հետաքրքրություն դեպի օրյեկտիվ իրականությունն ու բնությունը, ժ—ժե դարերի հայ գիտնականները դդալիորեն լայնացնում, խորացնում, իսկ մի շարք դեպքերում նոռովի մեկնարանելով հիմնովին վերակիմաստավորում են այդ հաղողերը:

Միջնադարուան երաժշտական գեղագիտության անկյունաբարային հետեւյալ հարցերը

1 Հայկական վաղմիջնադարյան երաժշտական գեղագիտության մասին տե՛ս մեր Հողվածը՝ «Եղիք Հայկական վաղմիջնադարյան երաժշտական գեղագիտությունից», «Տեղեկագիր» Հայկական ՍՍԼ գիտությունների ակադեմիայի (Հասարակական գիտություններ), Երևան, 1961, № 2, էջ 49—60:

ներկայացնում են իրար հետ սերտ կապված ու իրարից բխող խնդիրների ամբողջական մի հարադրություն. ա) երաժշտական արվեստի ծագումը, բ) երաժշտության էությունը, գ) նրա ներգործության ուժն ու բնույթը, դ) աշխարհիկ ու հոգևոր երաժշտության փոխնարարերությունն ու ե) երաժշտական արվեստի հարաբերությունը օբեյկտիվ իրականությանը:

Հակիրճ ծանոթանանք սույն հարցերի հարադրությանը, պահպանելով նշված հերթականությունը:

Հայաստանում մինչև ժԱ դարում, իսկ Արևմուտքի և Արևելքի միջնադարյան բոլոր քաղաքակրթություններու ՝ ավելի երկար ժամանակ, առհասարակ աշխատուի և, մասնավորապես երաժշտության օգգման մասին սարածված է եղել կրոնական միստիկ մի ըմբռնում, որի համաձայն երաժշտական արվեստը մարդկային հասարակության մեջ հանդես է գալիս ու զարգանում՝ «աստվածային հայտնության» միջոցով: Մեզ մոտ դեռևս վաղմիջնադարում Դավիթ Անհաղթը հաստատում էր, թե երաժշտական արվեստը «գտել», ստեղծել են թրակացիք, այսինքն մարդկի: Սակայն սրանով դեռ չէր բացատրվում, թե ի՞նչպես են մարդիկ «գտել» այդ արվեստը:

ԺԱ դարի հայ ականավոր փիլիսոփա Հովհաննես Սարկավադ (Խմաստասեր) Վարդապետը իր «Բան իմաստութեան» շափածո ինքնատիպ երկում երաժշտության (և միջնադարում նրա հետ սերտ կապված, բանաստեղծության) ծագման մասին առաջ է քաշում իր էությամբ, Դավիթ Անհաղթի վերըհիշյալ տեսակետը հիմնավորող, իսկ մատուցման զգուշավոր ձևով՝ ժամանակակից գիտնականներից շատ շատերի համար ընդունելի, ամբողջական մի տեսություն:

Հովհաննես Սարկավագ Վարդապետի «Բանի մաստութեան»-ը մի գեղեցիկ ու բովանդակալից ոտանավոր է սարյակ կոչվող երգեցիկ թոշունի մասին։ Դրա վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Հ. Ալիշանը, որը հրատարակելով քերթվածը, նշել է, թե այն «... բոլորովին նոր գաղափար մը կը հրճայե մեր ազգին հին գրվածքներուն մեջ»², իսկ ինչ վերաբերում է արվեստի ծագման մասին քննարկվող երկում արտացոլված վերօհիշյալ տեսության, ապա այդ հարցը առաջին անգամ պարզաբանել է ակադեմիկոս Մ. Արեգյանը³։ Այնպես որ գարգացած ավատականության շրջանի հայկական գեղագիտության վերաբերող բոլոր հարցերից զեթ այս մեկի մասին հայագիտության մեջ բարեբախտարար արգեն ստեղծվել է որոշակի ու միանգամայն համոզեցուցի մի տեսակետ։ Ըստ այդ տեսակետի՝ Հովհաննես Սարկավագ Վարդապետը երաժշտությունն ու բանաստեղծությունը համարում է սովորովի գեղարվեստներ, որոնք ծագում ու գարգանում են որպես բնության նմանվելու և բնությունից սովորելու մարդկային ձգուման անմիջական արդյունքը։ Այդ մասին են վկայում Սարկավագ Վարդապետի քննարկվող քերթվածի ամենաէական մասերը։ Այսպես, բանաստեղծության մեջ մարդկային ձգուման արդարությունը պարագանելով սարյակի, որպես բնածին արվեստավորի, արժանիքները, հեղինակը իսկույն և եթ խնդրում է երգեցիկ թոշունին գալ իր մոտ, որպեսզի ինքը՝ կենդանական աշխարհի գլուխը կանգնած «մեծ» արարածը, բնության այդ «միորդիկ» ներկայացնեցից «բաշարություն» սովորի։

Արդառ և գուարբուն բրոշուն հրակող և բարքառող, կանչող և կարկաչող, նրանուող ձայնող պաշտօնասէր, Արդ եկ ինձ մեծ ի գովարին զի Արարշին փառ մեծացին,

Մեծ ի փոքու բարունքի և բաշարության ձայնից։ Այնուհետև Սարկավագ Վարդապետը մասնափորում է իր խոսքը սառայակի արվեստի մասին, թոշունին անվանելով «ինքնարաւ», «ինքնուսումբն» և «ամենահնար երաժշտու», ու տալիս՝ «ոգեպես ու մտավորապես զարդացած մարդու գիտակցության մեջ ամենատարբեր հույզեր, խոր մտորումներ և ապրումներ հարուցող նրա հարուատ երգեցողության դիպուկ նկարագիրը»։

Խոկ արունափի զու երամիշտ ամենանեար, անվարդապետ, նենարաւ, ինենուումբն, վայրաբակ և անբաղաւ, Անմերձ և մօտար, ուրախաւար լրասիրաց,

² Հ. Ալիշան, «Հովհաննես Սարկավագ Վարդապետ», «Յաղթականական 1847, էջ 219.

³ Մ. Արեգյան, «Հայոց հին գրականության պատմություն», գիրը II, Երևան, 1946, էջ 52.

Քաղցրածայն զաշնակատը՝ ուղիս կարծեմ ըստ արևստին, Սասակախոս և նարքավանկ, խանդաղատող և ողբերգակ, Համամայող և ողբերգակ, Սպառնացող և նեղանոս, զրգուաղ, կոչող և նրամարող, Կականող և ձայնարկու, յայդ խրենացող և զաւրենացեալ.

Զարգացնելով իր մտքերը, բանաստեղծը նախ հարց է տալիս սարյակին, թե ո՞րտեղից է նա սովորել խոսել մարդկանց համար օտար (այսինքն՝ ոչ-մարդկային, կենդանական) բայց և, միենալով ժամանակ, «ընտանիք (իմա՝ հասկանալի, այսինքն երաժշտության) լեզվով։ Հետո, ինքն իրեն անվանելով «կիսակատար իմաստակ», խոհուն արվեստագետը կրկին անդամ ու ալելի զորեղ կերպով արտահայտում է սարյակին աշակերտելու և նրանից սովորելու իր բուռն ցանկությունը, խոստանալով, դրա փոխարեն, սարյակի մասին ռքաշայարմար մի ներքող հորինել, որից օգուտ քաղեին իմաստունները.

Արդ օտար՝ իցէ ևն խօսել յայլակօսա և յընտանիս, նկ ուստ ինձ, զի ծանեաց կիսականար իմաստակին. Մի պատճառեր զանքանուրին զու յօղաձայերը վերծանող,

Անյօդ ձայնի վարդապետա և բատացիր զիս աշակերտ, Զի նատակցից ևն փոխարէն ընդ ուսելյա իմաստուրեանն, Արձակեալ ևն ներողեան բոլից զգինի անապական, Առ նանդիրեալը մամանակ անջրնելի հաջարմար, Ցուղուական և զայելուս, յում օգտին իմաստացեալ։

Քերթվածի ամենաազդեցիկ հատվածներից մեկում հիշատակելով հին աշխարհին ծանոթ առասպիլական ու իրական մի քանի մեծ երաժիշտների, բանաստեղծը նրանց համեմատում է սարյակի և երգեցիկ այլ թոշունների հետ ու գտնում, որ առաջինները նսկմանում են երկրորդների կողքին, որոնց արվեստը բնական, բնածին և բնատուր է։

Ամփին այր բերացի և Արին միքեմնացի, Որվես քարկացի, այս երածիշու են մեծագովի, Այլ նրազեալ են առ նորու որք բնականան են պանուննեալ։

Զի զործի այս արունափի նոյն շունին ի բնուրենէ։ Վերջապես, նոյն այդ համեմատության կարգով հիշատակելով նաև «Հոմերական տաղերը», Սարկավագ Վարդապետը եղանակացնում է, թե արվեստը, որ ձեռք է բերվում վարժությամբ ու կրթությամբ, չի հասնում իր նախատիպարին՝ մայր բնությանը.

Բազմադեան երգարանա եղանակեա և կարման, Հոմերական տաղիցը շափ և ծանուցեալ լինի բազմաց,

Յոտանաւոր և ցուցական քառ մերողացքն անսակի, Կամ թէ ևս անհապօյն, որպէս բրի ինձ գիտողիս. Զի վարձումն և կրօւրիմ ոչ ժամանէ, ուստի բնուրիմ:

Այսպէս, ուրիմն, ի դեմս սարյակի տեսնելով ստեղծագործ բնությունը, և ձգտելով աշակերտել սարյակին ու սովորել նրանից, Սարկավագ Վարդապետը փաստորեն հաստատում է, որ արվեստի և նաև անվարքապետի երաժշտության ու բանաստեղծության աղբյուրը բնությունն է: Բնությունից են մարդկան սովորում իրենց արվեստը և բնության են աշխատում նմանվել իրենց արվեստում, երբեք, սակայն, չկարողանալով հասնել, «ժամանել» բնությանը:

Այս վերջին կետը արժանի է հատուկ ուշագրության: Ըստ Սարկավագ Վարդապետի, արվեստը, ծագելով որպես բնության նմանողությունը, ի վերջո, կրավորական նմանողության չէ, որ վեր է ածվում, և որ այն իր զարգացման մեջ բնության «հասնելու» միտում էլ ունի: Ու եթե խոհուն գիտնականը այս կապակցությամբ եղարկացնում է, թե արվեստը այնպես էլ չի հասնում (և կամ, որ նույնն է՝ չի հասնելու) բնությանը, ապա սրանով երբեք չի նսեմանում, անշուշտ, արվեստը, որպես մարդկային գործունեության ձեւերից մեկի, ողջ նշանակելիությունը⁴: Ընդհակառակը, հմաստասերի ամյալ եղրահանգումը ի վերջո խոսում է արվեստի զարգացման անհուն հնարավորությունների ու դրանց մեծ զաղունիքի մասին: Որովհետև արվեստը, ի դեմս բնության, ունենայով գեղեցկության ու ներդաշնակության հավերժական, և իր համապարփակությամբ իրոք անհասանելի մի տիպար, վերցինիս հասնելու իր ձգտման մեջ ձեռք է բերում զարգացման հավիտենապես գործող հուժիու խթաններ: Այստեղից պարզ է, որ Սարկավագ Վարդապետի բննարկվող տեսությունը բնդհանուր ձևով շոշափում է նաև երաժշտության ու օրիելիտի իրականության (տիյալ գեպքում՝ բնության) հառարեկության խնդիրը:

Ավելին, այդ տեսությունը որոշ շափով առնչում է երաժշտության էլության խնդրի հետ ևս: Որովհետև, «Ի՞նչ է երաժշտությունը» հարցին Սարկավագ Վարդապետը պատասխանում է. «Դա բնության նմանողությունն է»: Սակայն, այս զատողությունը կարող է վերաբերել ոչ միայն երաժշտության, այլև մուս ոոյոր արվեստներին: Ալդ պատճառով էլ, հատկապես եռաժշտական արվեստի էլության հարցը քննարկելիս, հարկ է

⁴ Հատկանշական է այս տեսակետից, որ, ինչպես կտեսնենք ստորև, մեր միջնադարյան մտածողները, երաժշտական արվեստը համարելով բնության նմանողությունը, միևնույն ժամանակ դանում էին, թե երաժշտությունը ազդում է հենց բնության վրա էլ:

զգացվել մասնավորելու խոռոքը, ինչպես այդ արել է միջնադարի շրջանի մի այլ նշանավոր հայ գիտնական՝ Հովհաննես Երզնկացի Պլուդը (ԺԳ դ.):

Վերջինս մեկն է մեր միջնադարյան այն խոշոր գեմքերից, որոնք սիրում են ամեն մի հարմար առիթով խոսել ու դատել երաժշտության մասին: Երաժշտության վերաբերող դատողություններին Հովհաննես Երզնկացին հատկապես մեծ տեղ է տալիս իր «Քերականի մեկնութիւն»-ում: Հենց այդ աշխատությունում շոշափելով երաժշտության էության հարցը, Հովհաննես Երզնկացին նախ նշում է, վկայակոչելով իմաստուններին, թե երաժշտական մեծ արվեստը, որին ինքն էլ կցանկանար «հասու լինել», «շարախառնութիւն ունի հոգույ և մարմնոյ», այսինքն նյութականի և անյութականի, ինչպես կենդանի ամեն մի օրգանիզմ հոգի ունի և մարմին:

«Եւ զի կամիմ աստանոր փոքր ինչ յիշել յերաժշտականէն մեծէ արուեստէ, իրը զնաշակ զօրութեան արուեստին տալով ուսումնասիրաց, որում և ես բազում յոժարութեամբ ըլձայի հասու լինել:

... Ասացեալ է իմաստնոց, թէ որպէս կենդանին հոգի է և մարմին, նույնպէս երաժշտական արուեստն շարախառնութիւն ունի հոգույ և մարմնոյ...»⁵:

Երզնկացին գտնում է, որ երաժշտության նյութական կողմը կազմում են երաժշտական գործիքները, ներառյալ նաև մարդու (իմա՞ երաժիշտ-կատարողի)⁶ որպես «բանաւոր» արարածի մարմինը: Խոկ երաժշտությունը ինքը, և, մասնավորապես, երաժշտական ինտոնացիան, որոր Երզնկացին անվանում է «ձայն», անյութական է: Թարինված լինելով մարդու մեջ, նրա հոգում, այդ ինտոնացիան լսելի հնչյունների է վերածվում երաժիշտակատարողի միջոցով:

Պետք է ասեի, որ երաժշտական արվեստում նյութական և աննյութական կողմեր տարբերելու ու բռն երաժշտությունը աննութական համարելու գալիս է դեռևս Գավիթ Անհաղթից, և որ Հովհաննես Երզնկացին հիմնը վում է վերցինիս մտքերի վրա: Սակայն, որպես ելակետ ընդունելով ինքնին վիճելի այդ մտքերը, նա դրանք զառացնում է բոլորովին այլ ուղղությամբ և երաժշտական արմեստի էլության հարցի կապակցությամբ ի վերօն անում է խոր ու լայն այնահսի մի ոնդանըացում և զայիս է այնքան ճիշտ մի եղրակացության, որ միանգամայն երկրորդական էլ է դառնում նրա որպես ելակետ բնումած որուցի վիճելի լինելու հանդամանքը: Նախ, ձգտելով ավելի մատեկի

⁵ Ցովհաննես Երզնկացի, «Քերականի մեկնութիւն»:

⁶ Նույն տեղում, էլ 44ա:

դարձնել երաժշտության անյութականության մասին զարգացրած իր մտքերը, երգընկացին դիմում է մարդկային ձեռքերի միջոցով իրականացվող այն արվեստներին (ըստ երևությունը, բանդակագրությունը, նկարչությունը և այլն), որոնց հիմքում ընկած են շոշափելի ու օթանձր, նյութեղեն մարմիններ: Ապա, հակադրելով երաժշտությունը այդ արվեստներին և ընդգծելով նրա ռմաքուր էութենէն» լինելը, իմաստասերը հանգում է այն եղրակացության, որ երաժշտությունը ուրիշ բան չէ, եթե ոչ «լսողական»-ի հետ կապված և լսողությամբ ընկալվող իմացուրդուն:

Այսպես. «Եւ ամենայն արուեստ, որ գործի ի ձեռաց մարդկան, — ուսուցանում է երգընկացին, — նիւթ արուեստին և ձև՝ մարմին է նիւթական և թանձր և սկզ երաժշտականն ի պարզ և մաքուր էութենէն է: Այսինքն յիմացականէն և ի լողականէն» (ըստգծումները մերն են—ն. Թ.):⁷

Այսպիսով, Հովհաննես Երջնկացու սովորությանը պարզ հասկացվում է, որ ըստ մեր միջնադարյան այդ մեծ մտածողի, երաժշտությունը իմացություն է, ավելի ճիշտ՝ իմացության ձևերից մեկը, որի առանձնահատուկ հատկանիշն է «լուսողական»-ի, այսինքն ձայնային աշխարհի հետ անմիջական կեռպով ու անքակտելիորեն կապված լինելը: Արդարև, հենց դա էլ կազմում է երաժշտական արմեստի, որպես հասարակական գիտակցության ձևերից մեկի, ուն էությունը:

Հատուկ նշման արժանի է այն հանգամանքը, որ ըստ բոյոր տվյալների, Ժ-ԺԵ դարերի հայ գիտնականները երաժշտության էության հարդի մասին դատելիս, իրենց տեսադաշտում ունեցել են նաև սուստ ոռոճիքային ձևեռում մարմնավորվող կերպարները:

Այս կապակցությամբ նախ ասենք, որ դատերվ պատմական մի շարօ տվյալներից, միջնադարյան հայ հետնակների աերճախոս ասուլիթներից, մեզ հասած ձայնային երաժշտության նմուշներում միջնադարյան գործիքաւին տիպի փայլուն հատվածների առկաության փաստի, և ժամանակին մեզ մոտ կիրառված գործիքների տեսակներին, ձերն ու կառուցվածքին վերաբերող ձեռագրական նյութերից, Հայաստանում, զարգացած ավատականության շրջանում, գործիքաւին երաժշտությունը հասել էր զարգացման բարձր աստիճանի, ի հայտ բերելով արտահայտական իր բազմապիսի հնարակորդյություններն ու ներգործության անոնեմադրելի ուժը: Եվ այդ հանգամանքը թելադրում

⁷ Յովհաննէս Երջնկացի, նշված աշխատությունը, էջ 70բ:

էր հայ գիտնականներին՝ գործիքային երաժշտությունը դասել վոկալ-ինստրումենտալ երաժշտության կողքին, որպես երաժշտական արվեստի ինքնուրուց ու ինքնարավ մի ընագավառ: Ահա թե ինչ է գորում, օրինակ, խորաթափանց Երզնկացին. «Այլ ամենայն այսպիսի պաճուճեալ բան, խոպվական կամ խաղաղական, նման ասացեալ է կամ յառաջնոցն կամ ի մէնց, որը են այս խազմ, վրդով, յոյզ, ամբոխ, աղմուկ, դղրդումն, բամբին, դոփին, որոտ, բարախին, գանչին, կանչին և այլ այսպիսիք, որ շկարեն զիրս ստորդ ասել, դարձեալ բերդեալ կոչի, որ ըստ արուեստական հնչմանն յարմարի նա, որպէս փողք, կնդրնդոցք, քնարք, տափիղը, սրինկը, և այսպիսիք»:⁸

Այլ կերպ ասած, այն, ինչ հնարավոր չէ լրիվ պատկերի («ստորդ ասել») կենդանի խոսքով, կարելի է նկարագրել ու արտահայտել երաժշտական գործիքներին հատուկ բազմերանգ հնչումների միջոցով, որպիսի արվեստը նոյնպես «Եերբուրդուն» է:

Իսկ Սարկավագ Վարդապետը, բնութագրելով գործիքային հնչումներն ու առնասարակ գործիքային նվագո, եղբակացնում է, որ վերջինն մարդկային բանականուրան զուրուրունն ունի, լինելով նույնքան իմաստավորված ու արտահայտիչ, ինչքան կենդանի խոսքը: Եվ դա, Սարկավագ Վարդապետի կարծիքով, ապացուցմում է նրանով, որ օրինակ, մող նվագելիս (վառպետ) կատարողները հեշտությամբ փոխում են երաժշտության բնույթը, ելնելով ստեղծագործության կերպարալին բովանդակությունից, մինչ ունկնդիրները հետևելով նվագին՝ աշխատում են հասկանալ, թե ի՞նչ է ուզում արտահայտած լինել փողոր, փողահարդ:

«Անասնոցդ ձայնն մի որորակ ունին ամէնն անյօդ, — գորում է հեռինակո, — ոդ և ոչ իրոր փողից և ընառաց չեն, որ թէաէտ անյօդ են, այս զոռութիւն բանի ունի ի հնչումն: Եւ քեզ օրինակ այն՝ որ դիւրաւ յորժամ կամին Դ մոփոխիսն] զձայնը յոյզ զանազանութեամբ, խաղու, պատերազմի և այլ զինչ կամին, և լուսը միտ զնեն, թէ ինչ կամի փողն հարկանից»:⁹

Վերո մնարկված խնդրի հետ սերտ կապված է երաժշտական գեղագիտության վեռարերու ամ կարևոր հարող, թէ ինչպիսին է երաժշտության աղդեպությունը կամ նեռուծությունը Աւս կապակությամբ Ժ-ԺԵ դարերու մեր գիտնականները, և ժամանակուապես, նույն Հովհաննես Երզնկացին, նախ

⁸ Յովհ տեղում, էջ 147բ:

⁹ Յովհաննէս Սարկավագ Վարդապետ, և լուծմունք եօթիսից գրացն Փիլոնի իմաստապիրից, Սատենադարան, ձեռ. № 2595, էջ 251աւ:

բնդգծում են երաժշտության՝ մարդկային հոգու վրա ունեցած ներգործության նշանակելիությունը, վերակենդանացնելով դեռևս հնում ձեւակերպված և տվյալ հարցը շոշափող դրույթները: Դրանցից մեկն է, օրինակ, իր ժամանակին Դավիթ Անհաղթի կողմից ձեւակերպված այն դրույթը, թե երաժշտական արվեստի ներգործության մեջ ուժը կայանում է մարդկային հոգու ամենատարեր վիճակներն արտահայտելով և ունդիրներին ըստ այնմ տրամադրելու մեջ, որն և գրեթե բառացի կրկնում է Երզնկացին, Վլայակոչելով հեղինակին: «... Այլև սորին հոմանութեամբ պատուելոյն, Դավիթի մեծի փիլխոփայի, որի ի Գիրս սահմանացն տառ մեղ ծանօթութիւն մեծի արուեստիս, ասելով, եթէ պարս է գիտել, թէ մեծ է զօրութիւն երաժշտականին, պէսէս կրիւր ըմբռնելով դհոգին, և տրամադրելով, ուտէս յայտ առնեն մրմուճք և ողբք, ըստ ինքեանց տրամադրելով գհոգին...»¹⁰:

Հսկ սորում, Երզնկացին յուրովի հիմնավորում է սուն դրույթը, պարզ սրանելով, թե երաժշտության այսպիսի ներգործությունը բացարարում է նրանով, որ ձայնը «անմարմին» լինելով՝ «ազգակից» է հոգուն: «... Եւ զի ձայն անմարմին է, — զրում է նա, — և մեծ զօրութիւն ունի և աղջակցութիւն առ հոգին»¹¹: Խսկ Հետո, զարգացնելով իր մաքերո, հեղինակը հանգում է այն երակացության, թե երաժշտության ներգործության մեծ ուժին նեթակմում է ոչ միայն մարդու հոգին, այլ, հոգու միջնորդությամբ նաև մարմինը, տեսականորեն հիմնավորելով Հայաստանում միջին դարերում երաժշտության միջոցով հիմնադիմեր բուժելու տառածված փորձը. «Երգին և առ հիւանդսն, զի օդտակար է ի աէտ գութիւնութեան»: «... Եւ սակա այսր պատճառի գութին ուայնական գործիքն իմաստուն առաջին, զի ուրախացուցի, է հոգույ, և ընդունելով հոգի գուրախացուցի, է հոգույ, և սիրական կիոր, ներգործէ առ մարմինն և տրամադրեալ փոխէ զնա յիւրմէ բնութենէն»¹²:

Քի, է սա, «Սահմանը հմաստասիրութեան» աշխատության միջնառույան անանուն մեկնիների կողմիո հին աշխարհի առասպեսահան եռամիտ Օրփեոսի, ապա և մեր նախնիների մասին ասված խոսքերից էլ Հասեացիում է, որ, ոստ Հայաստանում ժամաներում տարածմած ու սիրված մի ուստահարի, երաժշտությունը ներգործում է նաև ենոնանական աշխարհի, անդամ վայրի ուստանների և անկենդան բնության վրա:

¹⁰ Յովհաննէս Երզնկացի, նշված աշխատությունը, էջ 74ր:

¹¹ Նույն տեղում, էջ 70ր:

¹² Նույն տեղում:

Այսպիս, «Որփես» գուսան, — գրում է հիշյալ մեկնիներից մեկը, — որ զամենայն ազգ համի և կենդանոյ ձայն ածէր, և հայնց քաղցր ձայն ածէր, որ ամենայն վայրիք ի նորա ձայնն գային..., որ այլ զիրար սպանէին ոչ, և ոչ այլ կոռուէին»¹³:

Խսկ մի այլ մեկնի, այլ առիթով, հաստատում է համակապես, հետեւյալը, ակնարկելով մեր նախնիների բարձր արվեստը. «Թանգի որ գիտէին զերաժշտականն, նա աստիճանք համարը ունին ձայնիցն, և զայն ի լարս քարտիցն յարմարէին, մինչ զի զանշունչան շարձէին՝ յորժամ հարկանէին» (ընդգծումները մերն են՝ ն. թ.)¹⁴:

Կասկածից վեր է, որ մեր միջնադարյան հեղինակները լավ գիտեին առասպելների արժեքը: Բայց վկայակոչելով և կամ նույնիսկ յուրովի ծաղկեցնելով այդ առասպելները, նրանք, մասնավորապես երաժշտության ներգործության ուժի մասին իրենց ասելիքը դիպուկ, պատկերավոր ու մատչելի էին դարձնում պարզապես:

Ինչ, մերաբերում է երաժշտության ներգործության բնույթի ինդրին, ապա պիտի նշել, որ վերևի մեջքերումներում արդեն մի քանի ակնարկներ կան այդ մասին: Օրինակ այն, թե երաժշտությունունու ուրախացուցիչ է հոգույ (Եղինկացի): և համ այն, թե վայրի զառանների վրա խսկ Որիենուի նվազը ազդում էր այնպես, որ նրանք «... զիրար սպանէին ոչ, և ոչ այլ կոռուէին»: Բայց հիշյալ խնդրի մասին մեր միջնադարյան մտածողները արտահաւել են շատ ավելի որոշակի ու լայնորեն ընդհաննրացված մտքեր ևս: Դրանց հանդիպում ենք Հակոբ Պոլիմեցու (ԺԵ դ.) և ներսին Լամբրոնացու (ԺԲ դ.) գործերում:

Հակոբ Պոլիմեդին խոսում է աշխարհիկ երաժշտության մասին: Եվ օնինակ բերելով ոսոծիթային նվազը, ու բնութագրելով այդ նվազի աղղեցությունը՝ ունենդիրների վրա առհասարակ և զինվորականների (բայց երեւութին, որպես ամենակարծրասիրտ ու խստառը մարդկանց) վրա մասնավորապես, նա գտնում է, որ երբ վարած կատարողո, հասի եռած կերպով լարում է գործիքը և սկսում է ցուուագրել իր արմեստո, երաժշտությունը «Հոռաշքներ» է ոսոծում, գեռում է լոռուն, ու վերացնելով նրան նույնիսկ մինչ հնընամոռացության աստիճանու, նրա Հոռուն առյցնում է զենքեկի հմայքով, որոն, հեղինակի ասելով «Հեղտութիւն» ալսինքն բերկուանո, խնորդիտը, այն է՝ ուարձորագուլն ուրախություն է պատճառում: Ճիշտ է, Հակոբ

¹³ «Սահմանը ասացեալ ի Դաւիթ», Մատենադարան, ձեռ. № 4132, էջ 65ա:

¹⁴ «Առուծունք Սահմանաց Դաւիթ», Մատենադարան, ձեռ. № 4132, էջ 9ր:

Ղրիմեցին «գեղեցիկ» տերմինը չի օգտագործում: Բայց նա իր նկարագրած երաժշտությունը որպատմ է այնպիսի խոսքերով, որոնք լայնորեն ընդդրկում են հատկապես լսելուց համար գեղեցիկի հասկացության բոլոր կողմերը՝ «ներդաշնակատր», «հեշտալուր» (այն է՝ «տարորժ լսելեց», «դիրիմաց», «անուշ» (որ նշանակում է նաև «լաւ»), «հաճույկան» և «ազնիւ»), «քաղցրորակ» կամ «քաղցր» (որ իր մեջ ունի «ընտիր»-ի ու «գեղեցիկ»-ի իմաստն է)՝¹⁵ և այլն:

«... Եւ յորժամ [երաժշտական իմաստասէրն] զնուագարանն սոյնպէս յօրինէ և կազմէ ի յարմար ձայնատրութիւն... յայնժամ առեալ ի ձեռն զինտնտոցն և շարժէ արուեստարար զմատունսն ի վերայ բազմութեան լարիցն: Եւ աստ տես զներդաշնակատր ձայնատրութիւնն բազմութեան աղեացն, թէ որպէս դաշնակիցք և ուխտակիցք եղեն միմեանց... [իսկ] յորժամ անուշ խաղացուցանէ զմատունսն ի նուագս նուագարանին, յայնժամ տես զնարմանալի հրաշս որ գործի ի պէսպէս խաղացմուն մատանց երաժշտին, թէ որպէս յափշակէ և կողոպտէ զմիտս լսօղացն: Թէ ի զօրաց ոք իցէ և յապուշ դարձուցանէ ի յանուշութիւն հեշտալուր ձայնիցն, մինչ մոռանայ զինըն ի նոյն հեշտութիւն, և ոչ կամի բնաւ մեկնիլ ի քաղցրորակ ձանատութենէ նուագարանացն»¹⁶:

Եթե Ղոհմեցին այս կերպ առաջ է քայում գեղեցիկի հասկացությունը, երաժշտական աշխարհիկ արվեստի ներգործությունը բնութագրելիս, ապա ներսին Լամբրոնացին բարձրացնում է բարիի և առաքինի գաղափարը, մասնավորապես, եկեղեցական երաժշտության ազդեցության խնդրի քննության կապակտությամբ: Նա էլ որպես օրինակ է բերում սաղմոսսերգությունը և հաստատում, որ եկեղեցական երաժշտությունը նույնաես մերացնում է ունկնդրին, ու այդ վերացման մեռ, նրա միտքն ու Հոգին առատելով ռդիւական» խորհուրդների, առաջնորդում է առարկինության, ան է՝ մարդու անձնական վարք ու բարօր ու եպի կատարելություն տանող ճանապարհով:

Լամբրոնացին գրում է. «Քանզի այս է շնորհ զօրութենէ սաղմոսիս՝ յերգելն փախուստանե զիտրհուրդս դիւականս... քանզի ամենենքան գալով յարտաքին խումապմանց, ոմն ի վաճառիդ տուր և առիդ, ոմն յաշխատութենէ մասմանական գործու, ալ ոք ի սինուտրականն կառակ, իշխանն՝ իշխանականն սաստէ, եկին մտին յեկեղեցիս, և

¹⁵ Տե՛ս «Հորդ բազիրք հայկակեան լեզուի», Վենետիկ, 1836—1837:

¹⁶ Հակոբ Ղոհմեցի, «Տումարի մեկնութիւն», Մատենագարան, ձեռ. № 2011, էջ 14բ—15բ:

դեռևս ամբոխեալ են ի խորհուրդսն իւրեանց յշշատակաւ զրաղանացն: Վասն որոյ նախ զհեշտալուր երգս սաղմոսացս երգեալ՝ մաքրեն ի մտաց նոցա զմարմնական տիպսն և երգօքս յափշտակեալ՝ զրաղեցուցանեն զմիտս նոցա յաստուածայինսն. և յորժամ բովանդակ երգ սաղմոսացս կատարի, և Հոնց կտակարանաց ընթերցմունք, և զմտաց մեր ներգործութիւն ըստ առաքինութեան ունակովթեան կովիտիսէ»¹⁷:

Այս փաստերը ցուց են տալիս, որ Հայաստանում, գեռևս միջին դարերում, գիտնականների և մտածողների մեզ հետաքրքրող տիպի զատողություններում ի վերջո բյուրեղացել են երաժշտության ներգործության բնույթի, իշակես գեղագիտական (էսթետիկական) (Ղոհմեցի), այնպէս էլ բարոյագիտական (էթիկական) (Լամբրոնացի), երկու կողմերին էլ վերաբերող ուսանելի մտքեր:

Աշխարհիկ ու հոգևոր երաժշտության փոխհարաբերության հարցը շոշափող դրույթները մեր միջնադարյան մտածողների մոտ հաճախ ընդելուզված են լինում երաժշտական արվեստի ազգեցության վերը քննարկված խնդրին վերաբերող դատողությունների հետ: Աւն աստիճան, որ երբեմն նույնիսկ դժվար է լինում որոշակիորեն սահմանազատել առաջինները երկրորդներից: Բայց և այնպէս, չիշալ հարցոր, ըստ բոլոր տվյալների, որ առանձին հարց, հատուկ դրադերել է ժ—ժի դարերի հաւ գիտնականների մտքերը:

Այս կապակցությամբ նախ անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում, քննարկվող ժամանակաշրջանում, ազգային երաժշտական մշակութիր շափազանդ հարուստ մի պատկեր է ներկայացնել իրենից՝ Կիլիկիան և Մայր Հայաստանի երաժշտական մշակությներով, կենտրոնական շրջանների ու «Ճեղերական» գավառների խաղ ու պարով, գյուղական և քաղաքացին լրիվ կազմավորված երգ ու նվազով, առհասարակ ժողովրդական, գուսանական և հոգևոր ճուղերով ու մասնաճյուղերով, և վերօպակ այդ ճյուղերից ամեն մեկի տուամելադու սարանցատվածությամբ (դիֆերենցմածությամբ): Ժանրային տեսակետից՝ ծվ պատահական է, որ գեռևս Գրիգոր Նարեկացին «բարացուցական» (այսինքն

¹⁷ Խորհրմածութիւն Սրբազն Պատարագի, բացարձակ տեսան ներսին կամբոնացյու, արքեպիհուկուսի Տարոսոնի Կիլիկիցտյա, Երուազեմ, 1842, էջ 34.

¹⁸ Հստ ձեռագրական բազմաթիվ տվյալների, Հայաստանում, միայն հոգևոր երգարվեստի բնագավառում, բյուրեղացած ժանրերն ու ձեռերը այս ժամանակամիջություն ներկայացնել են խիստ բազմազան մի պատկեր, որը ներամփոփել է սարմս, շարական, մեղեղի, սրբասագույն, տաղ, գանձ, ալիսի, բազավան, ալիս և ալ անուններ ունեցող երգերի շատ տեսակներ:

վարքի, բարքերի, սովորությանց, մտանուրյաս, հոգաբասությաս, կարա քաղաքապրածությաս աստիճանի ցուցարշը՝ է հասարակ սրաժշտակաս արվաստը, օրրակ բերսլով «բասբռաս բառացի բարանութիւն»-սերը՝ (այսինքն բամբռոփ կասդանի, խոսուն նվազը և առասարակ բամբռոփ նվագակցությամբ կատարվող երգ-երաժշտությար), ինչպես ու այս կերպ բացատրել է Նարեկը սիրադարյան անասուն մեկնիշներից սակը ևս, բայցրի օբարացուցական խոսքի դիմաց տպով հնտկալ «ըստում»-ը, «Երաժշտականութիւն» դարսն լողին յայտնէաւ: Արովհնեան երաժշտության մասին այսքան խոր մի դատողություն անելոց առաջ, նարեկացին խորհրդած պետք է լիներ իր ժողովրդի տարրեր հատվածների, տարրեր դասերի, կենցաղային ու աշխատանքային տարրեր պայմանների մեջ գտնվող զանգվածների երաժշտական փորձի առանձնահատկությունների վրա: Եվ իրոք, փաստերը ցույց են տալիս, որ ոչ միայն Գրիգոր Նարեկացին, այլև Ժ-ԺԵ դարերի հայ գիտնականներն առհասարակ, իրենց անսադաշտի մեջ ունեցել են մեր միջնադարյան երաժշտական մշակույթի ողջ պատկերը, գոնե իր ընդհանուր շրջագծերով, և, առանձին գեպերում, անգամ հավանողական խոսքեր են ասել այդ մշակույթի տարրեր երկույթների մասին, կամ սիրով արձանագրել են դրանք, առանց խարության, և կամ օգտակար ցուցմունքներ են ավել, եներով գեղեցիկին ու պատշաճավորի մասին իրենց ժամանակի հասկացության առավել ընդհանուր պահանջմունքներից: Այսպես, եսայի Նշեցին, օրինակ, նույնիսկ «ուամկական» տիպի կատակային ու երգիծական երգերի վրա է հրավիրում իր ժամանակակիցների ուշադրությունը, երբ գրում է: «Դարձեալ կատակերգութիւն է՝ զկատականաց նուագել խօսս: Նաև զեպերական և զհեղնական ճառան, որպէս ուամիկըն սովորեալ են առնել առ այսպիսիս զբանս իրեանց ձայնի հեղնական»¹⁹: Գրիգոր Մագիստրոսը հատուկ կանգ է առնում, մասնավորապես, գուսանական երկարաշունչ եռգերի վրա: Նա նշում է այդ երգերի «կարիկատուն բանիւթ շարամաննեալ», այսինքն կառուցվածքային տեսակետից զանազան բնույթի մասերից բաղկացած լինելը, ու չիրմ խոսքերով ընութագրելով դրանց գեղարվեստական արժա-

նիքները, արձանագրում, որ դրանք այժմ հայրի սոտ ավելի շատ են գուցառուն բասիւթ յարամանին շարամաննեալ ամենայն մրտունքը և երգք գուսանութեան, — գրում է հեղինակը, — քասկի բազում բանից պէտք են կարկատել և աւարտու զամ, զոր այժմ ի հայուսն առաւել քան ի յուսականիս գտանեմք: Քանզի շափ և զշիր բանի արուեստաւորեալ ներգործեն զայսուիկ յոյժ շքաղ և գուսարագիւտ և հրաշալի առասութիւնս: Կանզի աւարտեն միով գծիւ բազում բանս, եթէ գովասանութիւն և եթէ պարսաւ, երբեմն երիս գիրս յաւարտին ունելով զսիմեանս բախելով և երբեմն երկուս: և այսպէս ոտանաւորս ստեղծանին վեցոտանիս և բառոտանիսաւ²⁰: Այնուհետև, Վարդան վարդապետը անդրագանուում է առհասարակ տաղերին, և, ըստ բոլոր տվյալների, զեկավարվով իր ժամանակի առաջավոր մտավորականության շրջաններում տարածված հաջողագույն տաղերի հատկանիշների իմացույամբ, ընթերցողներին օգտակար խրատներ է տալիս, տվյալ ժանրի մոնողիաներում՝ մեղեդի և գրական շափածո տեքստի համաձայնեցվածության համեկու, համապատասխան ոճը պահպանելու և այլնի վերաբերյալ: «Տաղին յեղանակն շարայարմար պիտին, որ քաղցր գայ: և են և էջն ի տեղի և ըղողորդ, և զրան շափաւոր... և յորժամ բառն և եղանակն, և միտքն, և տանցն շափքն, ի յոնի լինին, նա ապա լինի տաղբն պատշաճագոյնք և գիպաւորր»²¹: Իսկ Հովհաննես Եղինկացին, ըստ երևույթին, երկար խորհրդած լինելով մեր միջնադարյան քաղաքային, և, մասնավորապես, գործիքային երաժշտության հատուկ կերպարների մասին, և իրավացիորեն գտնելով, որ վերջիններս, երաժշտության հուպական բնույթի թելազրած սահմաններում, կարող են այլեւալ կերպ մեկնաբանվել, հարմար մեկ առիթով սիրով նկարագրում է, թե ինչպես ունկնդիրները նույնիսկ վեճի են բնույթում, իրենց լսած նվազի կերպարային բովանդակության վերլուծության կապակցությամբ: Նա գրում է: «Որք լսեն զձայն փողոցն, զանազան նմանեցուցանեն, ոմն զայսին ասէ թէ ասէ և ոմն զայս, և վիճող բառս, զի զանազան կարծիքն ընդէմքն ին իրերաց և այլ ընդ այլոյ լսեն զձայննեն»²²:

¹⁹ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնը, «Մատենա Ողբերգութեան», Տփիսիս, 1905, էջ 311:

²⁰ «Հուծմունք Նարեկի», Մատենագրաբան, ձեռ. № 59, էջ 192ա:

²¹ Եսայի Նշեցի, «Քերականի մեկնութիւն», Մատենագրաբան, ձեռ. № 2373, էջ 46բ-47ա:

²² Գրիգոր Մագիստրոս, «Մեկնութիւն քերականին», տե՛ս Հ. Ածոն, «Дионисий Фракийский и армянские толкователи», Петроград, 1915 թ., стр. 231—232.

²³ «Յաղագս մեկնութեան քերականին, զոր մեկնեալ է Մեծ վարդապետն Վարդան ի խնդրոյ թագաւորին հայոց Հեթուայ», Մատենագրաբան, ձեռ. № 1115, էջ 126ա—126բ:

²⁴ Յովհաննես Եղինկացի, «Հուծմունք Փիլոնի», Մատենագրաբան, ձեռ. № 1053, էջ 301ա (Փիլոն Ալեքսանդ-

Օրինակները կարելի է բաշխացնել, բայց այստեղ (և վերը ում, մյուս հարցերի կապակեցվածք) բերվածներն էլ բավական են ցուց տալու համար, թե Հայաստանում, քննարկվող ժամանակամիջոցում, գիտնականները լավ գիտակցել են իրենց շրջապատող երաժշտական կյանքի բազմազանությունը և, մերի ընդ մերթ, անգամ տարվել՝ այդ կյանքի այլազան գեղեցկություններով։

Այսումնայնիվ, փաստերը խոսում են նաև այս մասիս, որ մարմիջնադարյան մտածողները հսու են եղել մեզ հստագրերող ու վերս ակնարկված երաւոյթսորին զուտ զգացուությին զարաբարմաք ցուց տալուց։ Նրաք զգոն զողմարոշվել են իրենց ժամանակից ազգային սրաժշտական մշակույթի անհասար հարստություններում, և որոշակորության տարրարելով գաղափարական ուղղուածության տեսակետոց սրբու հակադիր արվածարը՝ աշխարհիկս ու եկեղեցականը, օգտել են պարզաբանու նրանց փոփհարաբարությունը։ Կատ այդմ, նրանք շատ ճիշտ են որոշում և ամենայն շիտակությամբ արձանագրել ուն, թե երաժշտական արվածարը, իրեն հատուկ բոլոր օրոնքներով և օրինաշափություններով, առասարակ «արտաքին», այսինքն աշխարհիկ արվեստ է, որը փոխ է առնում Սկեղեցին, նկատի ունենալով նրա ներգործության բացառիկ ուժը։

Այսպես, ներսես Լամբրոնացին հաստատում է, թե շկս մի բան, որն այնպես «հեղաշտեր» մարդկային հոգին ու կամքը, ինչպաս դա անում են երգերը, պատշաճ կերպով կատարվելու դեպքում, և որ հենց այդ պատճառով նկնդեցին փոխ է առել սույն արվեստը «արտաքին», այսինքն աշխարհիկ մշակույթից։ «... Չիք ինչ՝ որ զկամս մեր հեղաշտեց յուրախութիւն կամ ի տրտմութիւն, որպէս զերգոցն ձայն, յորժամ որպէս պարտն իցէ՝ լինիցի. վասն այսորիկ և եկեղեցական աւանդութիւն ընկալաւ զոյն յարտաքնոցն»²⁶։

Այս ընդունելով, միջնադարյան մտածողներն ամեն կերպ պիտի աշխատեին բացատրել, անշուշտ, երիտասարդ հոգեւրականներին, որ հարկ է հետևել աշխարհիկ երաժշտության զարգացմանը, հասկանալ նրա նորագոյն նվաճումներն, ու, տեղին համեմատ, օգտագործել, ասենք, ժողովրդա-գուսանական արվեստում բյուրեղացող լեզվառնային կարգի հարստությունները, արտա-

բացու աշխատությունների հայերեն մեկնությունների, ինչպես և սույն՝ մեր կողմէց վկայակոչված, մեկնության հեղինակային պատկանելության մասին տե՛ս Գրիգորյանի հոգվածը, «Բաներ Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 95—115)։

²⁵ Ներսէս Լամբրոնացի, հիշված աշխատությունը, էջ 157։

Հայտության ձևերը, գեղարվեստական կերպարի ստեղծման ու վերարտադրման հարանքները և այլն։ Եվ իսկապէս, այդպէս էլ վարվել են մեր հին ու միջնադարյան հեղինակներից մի քանիսը²⁶, և մասնավորապէս, զարգացած պահանջանության շրջանի անառանք քերականագետներից մեկը, որը գրել է. «Երաժիշտն՝ գուսանն, հետ զ՞ի աղին ածէ, հետ ձայնով խաղ ասէ, զայն և գշաշթայն և զխաղն յիրար միարանէ։ Նոյնաէս դու այժմ զգիրքն կարդաս, զամենայն ինչ յիւր ձևն՝ թէ սպանական, թէ խանդաղատական, թէ տրտմական և այլն, զայնդ յոր ինչ որ հանդիպիս յայն ձևացոյ։ Արուեստ՝ զգուսանի խաղն ասեն, ... որ զմարդոյ կիրք փոխէ։ Նոյնպէս և դու, լընթեռուովն զմստուածաշունչ ֆիրք՝ զամենայն ինչ ձևացու կարդալու»²⁷։

Անշուշտ, ժողովրդի արվեստի անսպառ գանձարանից օգտվելու այս խորհուրդը, — որին, ի դեպ, միշտ էլ անսացել են Հայ եկեղեցու երաժշտական գործիչները, — վկայում է Հայաստանում պրոֆեսիոնալ երաժշտության զարգացմամբ շահագրգոված գիտնականների երաժշտագեղագիտական ավելի քան առողջ հայացքներու Անհրաժեշտ է դիտել տալ, սակայն, և այն, որ գեղագիտական քննարկվող գրույթը պաշտպանություն էր դանում նաև զուտ եկեղեցական մտածողության դիրքերից, որը բացասարար էր վերաբերվում դեպի աշխարհիկ արվեստը։

Առաջին հայացքից հակասական թվացող այս դիրքորոշումը բացատրվում է նրանով, որ հիշյալ մտածողության տեսակետից, եկեղեցին, սկզբնապէս փոխ առնելով երաժշտական արվեստը «արտաքին» մշակույթից, ապա և՝ իր ուրույն ոճն ստեղծելուց հետո, մշտապէս օգտվելով ժողովրդա-գուսանական երգաստեղծության փայլուն նվաճումներից, մեկ կողմէց, ինքն է շահում, և, մյուս կողմէց, պայքարում է աշխարհիկ արվեստի դեմ, հենց սրա զենքով։ Այս մոմենտը, որն առհասարակ իրեն զգացնել է տալիս մեր միջնադարյան գիտնականների որոշ աշխատություններում, հստակ արտացոլված է, ինչպես մի շարք անանուն հեղինակների²⁸, այնպէս էլ

²⁶ Նրանցից մեկն է, օրինակ, ը դարի նշանագործ երաժիշտ, գիտնական և իմաստասեր Ստեփանոս Սյունեցին, անը նրա «Մեկնութիւն քերականին» (Խ. Ածոնց, «Дионисий Фракийский и армянские толкователи», 1915, էջ 193)։

²⁷ «Յաղագի քերականութեան լուծունք», Մատենադարան, ձեռ. № 4132, էջ 94թ (ժանոթ. «Հաշվաթա ասածը՝ լարային կոնցոցավոր տիպի մի գործիք է»)։

²⁸ «Հարցումնք», Մատենադարան, ձեռ. № 3276, էջ 275ա («Վասն էր երգ և քնար խառնէր Դաւիթ ի յերգ հոգուն»)։

Գրիգոր Տաթևացու²⁹ և Վարդան վարդապետի նման խոշոր մտածողների ասուլիթներում ևս Ահա թէ ի՞նչ է գրում, մասնավորապես, վերջինս, մեղ հետաքրքրող խնդրի շուրջ, վկայակոչելով՝ Դավիթ մարգարեի վարվելակերպը. «... Եւ վասն է՞ր խառնեաց ձայնս և նուազսի բանս հոգույն Դափիթ. ... յաղագս երկու պատճառի. առաջին, զի սատանալի գիտ էր քնարաւր և տաղաւր ի բացցուցանել զմարդիկ, խառնեաց զայն ի բանս հոգույն Դափիթ, զի սրբնեցէ և իւր զինուրն խոցուեսցէ զինքն և հալածնեցէ, որպէս ի Սաւուզայ. և երկորորդ, զի քաղցրածայնութեամբն կաշառեալ մարդիկ և հեղտացեալ՝ զանիլաբար ուսցին զհոգէիսառն բանսն»³⁰:

Եւյտանդից պարզ է, որ Հայաստանում ըստ էության դրսան չեր թուլացել աշխարհիկ ու հոգուոր արվեստարի միջև գոյություն ունեցող պայտարբ: Բայց անկախ դրանից, թե Ծկաղեցին իշխափին սպասելիքներ է ուսեցել այդ պայտարի ելքից, նաև, զարգացած ավատականության շրջանում, վաղ-միջնադարի համեմատությամբ, մի կարեռը զիշում է արեւաշխարհիկ արվեստին, ինչպես կտեսնենք:

Նախ ասենք, որ պայտարելով աշխարհիկ արվեստի դմմ, և որոշակի վերաբերմունք ցոյց տալով նույնիսկ դեպի նրա առանձին ժամաները, Ծկեղեցին ամենին շի բավարարվել վերսի մեջբերման մեջ արտացոլված պատճառաբանությամբ: Նա աշխատել է տեսականորեն հիմնավորել իր սկզբունքային դիրքորոշումը և, այդ նպատակով, հատուկ կերպով բարձրացրել է երաժշտական արվեստի և օրինակի իրականության հարաբերության անկյունաբարային հարցը: Վերն արդեն նշել ենք, որ սույն հարցը ըսդհանուր ձևով շրջափակծ է Սարկավագ Վարդապետի՝ երաժշտական արվեստի ծագման խնդրին վերաբերող տեսությամբ էլ, որում օրինկարի իրականությունը ներկայացված է ամենալայն ընդուրկմամբ, որպես մարդկանց շրջապատող մայր բնությունը: Սակայն, դասակարգային սուր հակամարտություններով լիցուն այնպիսի միջավայրում, ինչպիսին էր ավատական Հայաստանի միջավայրը, կյանքը ինքը թելադրությունը էր՝ արվեստի ու օրյեկտիվ իրականության մասին խոսելիս, վերջինս դիմու որպես սոցիալական լուցիայրությունը, միակցությունը:

29 Գրիգոր Տաթևացի, «Քարոզզիրք», Մատենադարան, ձեռ. № 3105, էջ 561ր («Բէ վասն է՞ր մարգարեքն քնարաւր իրգին զարդնութիւն Աստուծոյց»):

30 Վարդան Վարդապետ, «Լուծմունք Սուրբ Գրոց», Մատենադարան, ձեռ. № 750, էջ 113ա—113բ:

այդ թվում և երաժշտությունը, բաժանելով երեք կատեգորիաների՝ առաքինի («բարիհ»), շար և միջակ, գտնում էր, որ, մասնավորապես, երաժշտության մեջ առաքինին հոգելոր երգերն են, շարը՝ հեթանոսական սովորություններ ու նախապաշտումներ արտահայտող երգերը (կապված «Թովլութեան», «դիմութիւնաւան» և «կարարութիւնաւան» հետ), իսկ միշակը՝ ժողովրդական և գուսանական լիրիկական (ասծական ապրումներ արտահայտող սրգարը, պարեղանակները և այլն): Կստորում՝ բավլիթ՝ «Երականը արվեստագիտին թուլադրում էր գործել միայն «առաքինի» արվեստը սահմաններում, այդ կերպ հասկացնել տալով, որ ինչպես «Հարը», այնպես էլ «միշակը» (և հստեսքար՝ աշխարհիկ բնույթի կողում ամեն ինչ) Սկեղեցու համար, վերջին հաշուով, հավասարապես անընդունելի են: Այս դրույթը արտացոլում էր Սկեղեցու անհանդուրդությունը դեպի հեթանոսական անցյալից եկող «սատանայական» արվեստի ամսում սի արտահայտությունը, անհանդուրժողություն՝ որը տարածվում էր ավատական ազնվականության ժառայող գուսանների արվեստի վրա ևս, և որը խիստ բնորոշ էր մասսավանդ օ—Զ դարերի համար, երբ Ծկեղեցին Հայաստանում մարտնչում էր հանուն իր դիրքերի վերջնական ամրապնդման: է—Է դարերում, երբ քրիստոնեությունը Հայաստանում բավականաշափ արմատավորվել էր արդեն, և երբ, դրա հետեւանքով, զգալի փոփոխությունների էին ենթարկվել ավատական վերնախավի կենցաղն ու նրանց ծառայող գուսանները դեպի աշխարհիկ արվեստն ու համապես դեպի աղնվականության գեղադիտական պահանջները գոհացնող երգերաժշտությունը, դատելով Ստեփանոս Սյունեցու ասուլիթներից, բավական մեղմանում է³¹: Սակայն, արվեստի եռակի բաժանման մասին Դավիթ Քերականի կողմից ձեւակերպված ու տարածված դրույթներում համապատասին ուղղում շի մուցվում:

Դա փաստորեն արվում է զարգացած ավատականության շրջանում, երբ Հայաստանում աշխարհիկ մտածողության և գուսանական արվեստի բարձր զարգացման պայմաններում, էլ չըր կարելի դիմադրել ժամանակի պահանջնիւ: Այս պայմաններում, Դավիթ Քերականի գեղագիտական դրույթների ուղղիչի դերում հանդես է գալիս Հովհաննես Երդիկացին, առանց, սակայն, առարկելու

31 Այս բոլորի մասին ավելի մանրամասն տե՛ս «Եջեր հայկական վաղ-միջնադարայն երաժշտական գեղագիտությունից», «Տեղեկադիր» Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի (Հասարակական գիտություններ), Երևան, 1961, № 2, էջ 49—60:

Դավթին: Այսպես, Երզնկացին, մի կողմից, կարօսս անվերապահորն ըստում է՝ Դավթի գաղափարները և սույնիսկ վկայակոչում է դրանք. «... Աւանդիմք ի բանից նախերգած եռամեծին Դավթի փիլիսոփայի, որ ասէ³². Ենրկուց իսկ պատճառում մարդուս գոյացեալ հաստատեցաւ բնութիւն. յոգոյ բանէ, և ի մարմնու գործնականէ. քանչի բոլոր գիտ իմաստից յայսուիկ յանկեալ դադարեաց, ի տեսական և ի գործնականն: Բայց կապեալը առ միմեանս առաջնորդելով մտածուն իրաքանչիւր ոք ի նոցանէ զիւրն կատարէ, և քաժանին յերիս մասուն՝ բարւոյ, շարի և միջակի: Բանականիս, որ է բարի, բնարան առաքինութեամբ գիրք ինչ ստեղծել չոգեւոր և երգը, իսկ շարին՝ թովագութիւնք և գիրութիւնք և կախարդութիւնք, իսկ միջակին՝ մրմունք, պարք, և որ ինչ միհանգամ այսմ հետեւինս³³:

Մյուս կողմից, սակայն, Երզնկացին առաջ է քաշում երաժշտական արվեստի. նոր՝ երկակի բաժանման մասին մի դրույթ էլ, նշելով. «Եւ բաժանի սա (այսինքն՝ «երաժշտականը»—Ն. Թ.) յաստուածային և ի մարդկային: Աստվածայինն երգի յեկեղեցիս, որ յաղագ հետութեան զղուան ածէ ի յոգիս, և փոխարկէ զմիտս մեղուցելոցն ի բարի խոկումն: Իսկ մարդկայինն երգի ի ժողովս խրախութեան և յուրախական հանդէսսն»³⁴:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե այստեղ խոսքը պարզապես հոգեւոր և աշխարհիկ երաժշտության մասին է: Սակայն, իրականում, Հովհաննես Երզնկացին «մարդկային» ասելով հասկանում է ոչ թե աշխարհիկ երաժշտությունը ամբողջությամբ վերցրած, այլ՝ նրա մի մասը միայն, այն էլ ոչ հիմնական մասը: Դա պարզ երևում է նրանից, որ Երզնկացին «մարդկային» երաժշտական արվեստը բնորոշում է որպես «ուրախութեան ժողով»-ների և «ուրախական հանդէս»-ների ժամանակ կատարուող երաժշտություն: Իսկ հրշալ «ուրախութեան ժողով»-ները կամ «ուրախական հանդէս»-ները, որոնք անց են կացվել գուսանների և վարձակների մասնակցությամբ, հնում կապված են եղել ազնը-վական դասի կենցաղի հետ:

Այդ մասին մի շարք շահավետ տեղեկություններ է հաղորդում Մ. Արեգանը, խոսելով, մասնավորապես, անցյալում ովասն ուրախութեան կոչված գուսանական տաղերի

³² Խոսքն այստեղ վերաբերում է Դավիթ Քերականի «Մեկնութիւն քերականին» աշխատության «Նախերգան»-ին (հմմա. Ա. Ածոնց, «Դաօնիս. Ա Փրակնիսկի և արմանական տոլկօթելն», էջ 79):

³³ Յովհաննես Երզնկացի, «Քերականի մեկնութիւն», Մատենադարան, ձեռ. № 2329, էջ 38ր:

³⁴ Նույն տեղում, էջ 70ր:

կապակցությամբ: «Այդ տաղերն այսպես «վասն ուրախութեան» կոչվել են, զի դրանք երգվել են ինչույքների ժամանակ, — գրում է նա, — երբ հարսանիքներին կամ այլ առթիվ ժողովվում էին մի տեղ բազմությամբ կերուխում անելու, կամ, ինչպես ասում էին, «ուրախություն» անելու, «ուրախանալու»: Նախուսում էին կերակուրները, մի քանի բաժակ միայն գինի խմելով, ապա սկսվում էր գինարբուքը, «խումը», կամ բոլն խրախճանքը: Ուրախակիցները քաշվում էին սրահի պատերի տակ, մեջտեղը թողնում էին պարի համար բաց տարածություն... Մատովակիները սկսում էին գինի բաշխել... Գուսաններն ու վարձականները (կին գուսանները) նվազում ու երգում էին...» (ընդգծումը մերկ է—Ն. Թ.):³⁵

³⁵ Ավարտելով այս գունեղ նկարագրությունը, Մ. Արեգանը հղողացնում է եղել հին ժամանակ մեր, ինչպես և ամեն ազնվականության վկանությունը ու ժամանցներից ու ժամանցներից մերն է—Ն. Թ.):³⁶

Մրան պիտի ավելացնել, որ հայկական հին սովորությներին քաջ ծանոթ մի ուրիշ հայագետ և՝ Հ. Վ. Հացունին, նույնպես «ժողովք» կամ «հանդէսք ուրախութեան», «երգ ուրախութեան» և այլ հնուց եկող արոտահայտություններ կապում է հայ ազնվական դասի կենցաղին հատուկ բարբերի հետ, փաստական հարուստ տվյալներով հիմնավորելով իր տեսակետը և վկայակոչելով միջնադարյան հեղինակների բազմաթիվ ասույթներ, ինչպես, օրինակ, Ժ. Պարի պատմիչ Արիստակես Լաստիկերտացու «ուրախական երգոց և բանից միայն լինէին հանդէսք»³⁷ հայտնի վկայությունը և այլն³⁸:

Այս բոլորի լույսի տակ դժվար չէ ըմբռնել, որ Հովհաննես Երզնկացին «մարդկային» երաժշտություն ասելով, իրոք հասկանում էր ավատապետական ազնվականության ժառանգություն գուսանների արվեստը միայն: Այնտեղից էլ պարզ է, վերջապես, թե Հովհաննես Երզնկացին հատկապես ինչպիսի ուղղում է մտցնում Դավիթ Քերականի վերոհիշյալ տեսության մեջ: Եթե Դավիթ Քերականը աշխարհիկ երաժշտության քիչ թե շատ աշքի ընկնող բոլոր ձյուղերը համարում էր ոչարակամ և միջակ» արվեստ (նայած կոնկրետ ժամանրին) և դրանով իսկ՝ անընդունելի, ապա Երզնկացին նույն այդ աշխարհիկ երաժշտու-

³⁵ Մ. Արեգան, նշված աշխատությունը, էջ 560—561:

³⁶ Նույն տեղում, էջ 562:

³⁷ Արփասակս Լաստիկերտացի, «Պատմութիւն», Թիֆլիս, 1912, էջ 56:

³⁸ Հ. Վ. Հացունի, «Ժաշկը և խնջույք հին Հայաստանի մեջ», Վենետիկ, 1912, էջ 209:

թյան մեջ տարրերում է մի նոր և, ըստ ամենայնի, ըստունելի կատեգորիա՝ «մարդկային» երաժշտությունը, ընդ սմիս նկատի ունենալով ոչ այլ ինչ, եթե ոչ ազնվական դասին ժառայող գուսանների արվեստը։ Այլ կերպ ասած, Հովհաննես Սրբնկացին պարզապես լրացնում է Դավիթ Քերականի գաղափարները, հարմարվելով նոր ժամանակների պայմաններին և, ըստ այնո՞ւ Եկեղեցու կողմից մի նշանակալից զիջում անելով նույն զասակարդին պատկանող իր աշխարհիկ եղբայրներին՝ ֆեռդալական վերնախավի ներկայացուցիչներին, որոնց կենցաղում մեծ տեղ էր գրավում գուսանական երգն ու նվագը։

Եթե ստորև, առավել պարզության համար, միացնենք երաժշտական արվեստի եռակի (Դավիթ Քերական) և Երկակի (Հովհաննես Սրբնկացի) բաժանման մասին իրար լրացնող դրույթները, ապա մեզ հասկանալի կլինի Եկեղեցու վերաբերմունքը դեպի միջնադարի շրջանի հայկական աշխարհիկ երաժշտության տարրերը ճյուղերը։

Այդպիսի միացությունից կստացվի հետևյալը։ Սրաժշտական արվեստը բաժանվում է շորո կատեգորիաների։

1. «Աստվածային» կամ «բարի» (առաքինի), որ հոգմոր երգարվեստն է,

2. «Մարդկային» կամ «ուրախութեան հանդէսներում կատարվող», որ ավատական վերնախավին ժառայող գուսանների երգ-երաժշտությունն է,

3. «Միջակ», որ ժողովրդական և ժողովրդա-գուսանական լիրիկական երգերն ու պարեղանակներն են, և

4. «Չար», որը հեթանոսական անցյալից եկող սովորութների ու բարբերի հետ կապված ժողովրդական երգերն են։

Ամփոփելով շեշտենք, որ քննարկվող հարցում Երդնկացու բաժինը կայանում է վերը բերված չորս կատեգորիաներից երկրորդի ձեւակերպման և այն ընդունելի համարելու մեջ։ Կասկածից վեր է այն, որ Երդնկացու կողմից աշխարհիկ՝ «մարդկային» երաժշտության մասին առաջ քաշված նոր դրույթը, իր ժամանակի համար առաջադիմական մի երևույթ էր, որով զգալիորեն ամրապնդվում էր Հայաստանում բուն Եկեղեցական մտածողության մեջ իսկ աշխարհիկ կենսազգացողության ներթափանցումը։

Սրանով ամենեկին չի սպառվում միջնադարյան հայկական երաժշտական գեղագիտության ողջ բովանդակությունը։

Սակայն վերը շարադրվածն էլ ավելի քան բավարար հիմք է տալիս հաստատելու, որ Հայաստանում գիտնականներն ու մտածողները հսկայական նշանակություն են տվել, մասսավորապես, երաժշտական արվեստի հայտ կապված հարցերին։ Եվ խորամուխ լինելով, նախ և առաջ, իրենց անմիջական շրջապատի ազգային երաժշտական հարուստ կյանքի տարբեր երկուլիթներում, ու տեսականորեն իմաստավորելով գրանք, ժ-ժեմարերի հայտնականները, զինված երաժշտական գեղագիտության բնագավառում մեզ մոտ գերակա վաղ-միջնադարում ձեռքբերված լուրջ նվաճումներով, բարձրացրել ու իրենց ժամանակի շափանիշով փայլուն կերպով լուծել են այնպիսի ծանրակշիռ հարցեր, ինչպիսիք են՝ երաժշտական արվեստի ծագումը, երաժշտության էությունը, նրա ներքորդության ուժն ու բնույթը, աշխարհիկ և հոգեոր երաժշտության փոխհարաբերությունն ու երաժշտական արվեստի հարաբերությունը օրինկտիվ իրականության հետ։

Հատուկ կերպով պետք է ընդգծել, որ Հայաստանում, միջին դարերում, երաժշտագեղագիտական մտքի այսպիսի բուռն ծաղկումը վկայում է ոչ միայն արվեստի մասին հայկական փիլիսոփայական-ընդհանրացնող մտքի տեսական բարձր մակարդակը, այլև աշխարհիկ ու հոգեոր երաժշտության դերի ու նշանակության մեծացումը, երկրի քանակության բոլոր խավերի կյանքում։

Դատելով երաժշտության ընդհանուր պատմության ընձեռած տվյալներից, և, մասնավորապես, արևելյան երաժշտության մասին Թանըրության հարությունի (ԺԲ. դ.) աշխատասիրած հայտառ տաճկերեն մեկ գրվածքից³⁹, ապա և վերածնդիքի շրջանի խոշորագույն երաժշտ-տեսաբան Զողեփփո Ցառլինոյի (ԺՋ. դ.)՝ հարմոնիայի հարցերին վերաբերող կարեռագույն երկից⁴⁰, միջնադարում հայկական գեղագիտությունը ոչ միայն հետ չէր մնում միջնադարյան քաղաքակրթված մյուս երկրներում զարգացող նույն գիտությունից, այլև աշխի էր ընկնում հույժ ինքնատիպ մի շարք գծերով, իր մեջ օրգանապես սինթեզելով մտքերի՝ և Արևմուտքին հատուկ դիսցիլինավորվածությունը, և Արևելքին հատուկ հարստությունն ու խորությունը։

³⁹ Տե՛ս Թանըրության հարություն, «Արևելյան երաժշտության ձեռնարկ», Մատենադարան, ձեռ. № 9340։

⁴⁰ Պարագա Ջազեփփո, «Гармонические установления», отв. перев. О. П. Р. — Корсаков рукопись (собственность ЛГК)։

